



Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2019-2020 ՈՒՍՏԱՐԻ, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ Լանդշաֆտային պլանավորում

1. Երկրագնդի գեոսինկլինալային և պլատֆորմային կառույցները, դրանց տեղաբաշխվածության օրինաչափությունները:

2. Երկրագնդի կլիմայական գոտիները, դրանց համառոտ բնութագիրը:

3. Երկրակեղև, կազմը, հիմնական ապարատեսակները, դրանց առաջացման երկրաբանական պայմանները:

4. Ստորերկրյա ջրեր, ճահիճներ, դրանց առաջացման և տարածման օրինաչափությունները:

5. Քարտեզագրական ընդհանրացում, էությունը, անհրաժեշտությունը կատարման ուղղությունները:

6. Ռելիեֆի ծագումնաբանական և ձևագրական հիմնական տիպերը, դասակարգման սկզբունքները:

7. Մթնոլորտի կազմը, կառուցվածքը, շրջանառության տեսակները, անոմալիաները, դրանց հետևանքները:

8. Կենսոլորտի առաջացման նախադրյալները, կազմը, սահմանները, կենսական համակեցությունները:

9. Դպրոցական քարտեզագրական ստեղծագործություններ, դրանց կազմման և օգտագործման ձևերը աշխարհագրական պարապմունքների գործընթացում:

10. Լեռնակազմական պրոցեսների տարեգրությունը, դրանց դերը երկրակեղևի ձևափոխությունների ընթացքում, արտահայտման ձևերը ռելիեֆի վրա:

11. Ջրագրությունը, ջրային հաշվեկշիռը, բաղկացուցիչ մասերը, օգտագործման ժամանակակից հիմնախնդիրները:

12. Էկոլոգիական հավասարակշռությունը բնության մեջ, դրա խախտման և լարվածության մեծացման պատճառներն ու հետևանքները:

13. Ընդհանուր աշխարհագրական քարտեզների բովանդակության մշակման և քարտեզագրական պատկերումների եղանակները:

14. Մեծ Կովկասի ֆիզիկաաշխարհագրական համառոտ բնութագիրը:

15. Աշխարհամասերի և օվկիանոսների ֆիզիկաաշխարհագրական շրջանացման սկզբունքները, դրա նշանակությունը:

16. Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական համառոտ բնութագիրը:

17. Սևանա լճի հիմնախնդիրը, դրա առաջացման պատճառները, լուծման հնարավոր տարբերակները:

18. Հյուսիսային Աֆրիկայի ֆիզիկաաշխարհագրական տարածաշրջանները, դրանց համառոտ բնութագիրը:

19. Երկրի գնդաձևությունը և այն քարտեզագրման եղանակները:

20. ՀՀ մակերևույթը փոփոխող ժամանակակից արտաձին պրոցեսները, դրանց տարածական տեղաբաշխման օրինաչափությունները:

21. ՀՀ կլիմաառաջացնող հիմնական գործոնները, կլիմայի վերընթաց գոտիները:

22. ՀՀ գետերի սնումը, ռեժիմը, ծախսերը, ավազանները: Խոշոր գետերի ջրագրական բնութագրությունը:

23. Մասնագիտական քարտեզներ, դրանց բովանդակության մշակման և քարտեզագրական պատկերումների եղանակները:

24. Արեգակնային ճառագայթում, տեսակները, հաշվեկշիռը, դրանց օրինաչափ տարածումը Երկրագնդի վրա:

25. ՀՀ հողերի բազմազանության պատճառները, հիմնական տիպերը:

26. Տնտեսական և սոցիալական աշխարհագրությունը որպես գիտություն: Նրա տեղը աշխարհագրական գիտությունների համակարգում:

27. Աշխարհի քաղաքական քարտեզը, ձևավորման փուլերը, քաղաքական քարտեզի փոփոխությունները 20-րդ դարում:

28. Երկրի պտույտները և դրանց աշխարհագրական հետևանքները:

29. Աշխարհի բնակչություն, վերարտադրության տիպերը, սեռատարիքային, ազգային, կրոնական կազմը:

30. Աշխարհի բնակչության տեղաբաշխման առանձնահատկությունները: Բնակչության տարաբնակեցում:

31. Ուրբանիզացիան որպես համաշխարհային գործընթաց, նրա հիմնախնդիրները:

32. Աշխարհի երկրների տիպաբանական դասակարգումը:

33. Համամոլորակային հիմնախնդիրները և Հայաստանը:

34. ԳՏՀ-ի ազդեցությունը համաշխարհային տնտեսության աճի տեմպերի ճյուղային և տարածական կառուցվածքի վրա:

35. Մարդ-բնություն փոխհարաբերության աշխարհագրական հետևանքները:

36. Բնական ռեսուրսների տնտեսական, սոցիալական և էկոլոգիական գնահատումը:

37. Աշխարհագրական ռեսուրսագիտություն, ռեսուրսների դասակարգման սկզբունքները:

38. Համաշխարհային տնտեսության ընդհանուր բնութագիրը:

39. Արդյունաբերություն: Ճյուղային կառուցվածքը, արդյունաբերության տեղաբաշխման սկզբունքները:

40. Արդյունաբերության տեղաբաշխման և տարածքային կազմակերպման ընդհանուր գծերը:

41. Աշխարհի էներգետիկան, վառելիքաէներգետիկ արդյունաբերությունը:

42. Մեքենաշինություն, ճյուղային կառուցվածքը, տեղաբաշխման սկզբունքները:

43. Քիմիական արդյունաբերության ճյուղային կառուցվածքը, տեղաբաշխումը:

44. Թեթև արդյունաբերություն, ճյուղային կառուցվածքը, հումքային բազան:

45. Գյուղատնտեսության զարգացման բնական և սոցիալ-տնտեսական նախադրյալները:

46. Տրանսպորտ, տեսակները, բեռնաշրջանառություն և ուղևորաշրջանառություն, դերը համաշխարհային տնտեսության զարգացման գործում:

47. ՀՀ արդյունաբերության ընդհանուր բնութագիրը, ճյուղային կառուցվածքը, մասնագիտացման ճյուղերը:

48. ՀՀ բնօգտագործման և բնապահպանության հիմնախնդիրները:

49. ՀՀ սպասարկման ոլորտը, զարգացման հեռանկարները:

50. ՀՀ մարզային բաժանումը, նրա սոցիալ-տնտեսական և ռազմավարական նշանակությունը:

Առաջարկվող գրականության ցանկ

1. Յու. Հ. Մուրադյան, Մ. Յու. Մուրադյան, - Արտասահմանյան երկրների տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, հտ.1: Երևան, Զանգակ, 1999թ.:

2. Յու. Հ. Մուրադյան, Մ. Յու. Մուրադյան, - Արտասահմանյան երկրների տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, հտ.2: Երևան, Զանգակ, 2000թ.:

3. Ռ. Մարգարյան, Մ. Մանասյան - Տնտեսական աշխարհագրություն, ԵՊՀ, Երևան, 2004թ.:

4. Լ. Հ. Վալեսյան, Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, Լույս, 1988թ.:

5. Պողոսյան Դ., Խոյեցյան Ա. Հայկական լեռնաշխարհի լանդշաֆտները և ֆիզիկաաշխարհագրական շրջանները, Երևան, 2006թ.

6. Մ.Գ. Մանասյան, ՀՀ տարաբնակեցման համակարգը, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2005թ.:

7. Հեղինակային կոլեկտիվ Հայկական ՍՍՀ գեոմորֆոլոգիան, Երևան 1971թ.:

8. Հեղինակային կոլեկտիվ Հայկական ՍՍՀ գեոմորֆոլոգիան, Երևան 1986թ.:

9. Պողոսյան Վ.Խ. Ընդհանուր երկրագիտություն, Երևան 2009թ.:

10. Գասպարյան Ա.Գ. Կենսաաշխարհագրություն, Երևան 2009թ.:

11. Կարապետյան Գ.Մ. Դպրոցական տեղագրություն և քարտեզագրություն, Երևան 2003թ.:

12. Կարապետյան Գ.Մ, Քարտեզագրություն տեղագրության հիմունքներով, Երևան 2008թ.:

13. Մնացականյան Բ.Պ. Հայաստանի ջրային հաշվեկշիռը, Երևան 2005թ.:

14. Միրիմանյան Խ.Պ Հողագիտության հիմունքներ, Երևան 1971թ.:

15. Т.В. Власова „Физическая география материков“, Москва 1976г.

Հաստատված է

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի թիվ 7 նիստում (22/02/2019)

**Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության
ֆակուլտետի դեկան՝**

Ռ. Սադոյան

**Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի վարիչ՝**

Ա. Խոնեցյան